

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն՝
բանասիրական գիտությունների թեկնածու
/ Ն. Որսկանյան

Անի Արտակի Համբարձումյանի «Կոմեդիա դել արտեի վերաբերյալ 20-րդ դարի իտալական դրամատուրգիայում» Ժ.01.07. /Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված թեկնածուական ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի 12.06.2024թ. նիստին մասնակցում էին՝ բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.դ., դոցենտ Հ. Մուսայեյանը, բ.գ.թ., դոցենտ Վ.Արսենյանը, բ.գ.թ. Գոհար Կարազյոզյանը, բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Նավասարդյանը, բ.գ.թ., դոցենտ Զ. Հայրյանը և Ք. Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը

Նիստի քարտուղար՝ Քրիստինե Հովհաննիսյան

Արտահայտվեցին՝ բ.գ.դ., պրոֆ. Հ. Էդոյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.դ., դոցենտ Հ. Մուսայեյանը, բ.գ.թ., դոցենտ Վ.Արսենյանը, բ.գ.թ. Լ. Գասպարյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Նավասարդյանը, բ.գ.թ., դոցենտ Զ. Հայրյանը և Ք. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ թեև ատենախոսության թեման ընդհանուր առմամբ ուսումնասիրված է, բայց ատենախոսության առաջադրված խնդրի տեսանկյունից

աշխատանքը արդիական է, և դիտարկման տեսանկյունը՝ ինչ դեր ունի կոմեդիա դել արտեն արդի դրամատուրգիայի և թատրոնի համար, գիտական նորույթի հիմք է տալիս: Ատենախոսին հաջողվել է մշակույթի և մասնավորապես թատրոնի պատմության մեջ դեռ անտիկ ժամանակներից կարևոր տարր եղած դիմակը մեկնաբանել կոմեդիա դել արտեի արվեստի շրջանակում, ցույց տալ դիմակի պատմական ծագումն և իմաստային զարգացման ընթացքը, դիմակի՝ որպես կոմեդիա դել արտեի բաղադրիչի կիրառումը արդի թատրոնում: Ողջունելի է ատենախոսի աշխատանքը Պիրանդելլոյի տեսության ուսումնասիրման և Պետրոլլինիի դրամատուրգիայի քննության առումով: Ատենախոսը ներկայացրել է կոմեդիա դել արտեի ավանդույթի և՛ տեսական, և՛ գործնական հիմքը և կիրառումը:

Անի Համբարձումյանի ատենախոսությունը բաղկացած է *Ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից*, որը պարունակում է 111 աղբյուր: Ատենախոսության տեքստը շարադրված է 143 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածության մեջ ներկայացված են ատենախոսության արդիականությունն ու գիտական նորույթը, նպատակը, խնդիրները, մեթոդաբանությունը, թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, հարցի պատմությունը, նշվել են հետազոտության թեմայի հիմնական գաղափարները, առարկան, օբյեկտը, ընդհանրացվել և ընդգծվել են հետազոտության արդյունքներն ու տեսա-գործնական նշանակությունը: Սակայն այս ամենը համակարգված չէ, ներկայացված է անկանոն դասավորվածությամբ, օրինակ՝ առարկան նշված է 8-րդ էջում, իսկ օբյեկտը՝ 10-րդ, արդիականությունը՝ 8-րդ էջում, իսկ նորույթը՝ 11-րդ: Ցանկալի կլիներ, որ աշխատանքում գրականագիտական դիտանկյունը չմնար թատերագիտականի ստվերում, և գրականագիտական վերլուծության կշիռը ավելին լիներ:

Ատենախոսության *առաջին գլուխը՝ «Կոմեդիա դել արտեի գեղագիտությունը մշակութապատմական համատեքստում»*, ներառում է երեք ենթագլուխ: Առաջին ենթագլխի վերնագիրն է «Կոմեդիա դել արտեի դիմակները, դրանց սկզբնավորումը և զարգացումը», որտեղ ներկայացվում են կոմեդիա դել արտեում դիմակի ձևավորման

հիմքերը, դիմակի իմաստային զարգացումները ժամանակի ընթացքում, դրանց մնայնության պատճառները /էջ 31/: Դիմակների գործառույթները դասակարգվում են ըստ «կոծկման» և «բացահայտման» գործառույթների, քննվում է կերպար-տիպար ձևավորումը, դրա առնչությունը ներկայացման ֆաբուլային և այուժեին: Երկրորդ ենթագլուխում /«Իմպրովիզի, ժեստայնության և լացցիների արտահայտումը կոմեդիա դել արտեում»/ ներկայացած են իմպրովիզի ծիսական նախահիմքերը, մշակման ընթացքը, քննվում է իմպրովիզը՝ որպես կոմեդիա դել արտեի հիմնական արտահայտչամիջոց, ժեստերը, դրանց, իմպրովիզի և լացցիների կապը և այս ամենի դերը ներկայացման կառուցվածքում: Առաջին գլխի երրորդ ենթագլուխը՝ «Կոմեդիա դել արտեի ազդեցությունը եվրոպական դրամատուրգիայի վրա», նվիրված է 18-րդ դարում կոմեդիա դել արտեի բարեփոխման խնդրին: Քննվում են այդ ժամանակաշրջանի ճանաչված իտալացի դրամատուրգներ Կառլո Գոլդոնիի և Կառլո Գոցիի դերը ինչպես կոմեդիա դել արտեի ավանդույթի զարգացման, այնպես էլ դրա միջոցով իտալական թատրոնի ազգային ավանդույթը համաշխարհային թատրոնին հասցնելու առումով, նրանց փորձը մշակել «հին ավանդույթը նորովի»՝ մեկնաբանելով եղանակները, ինչը պայմանավորում էր սեփական թատրոնի տեսլականը /էջ 43-52/: Ատենախոսը այս ենթագլխում քննում է նաև 19-20-րդ դարի տարբեր հեղինակների և թատերական գործիչների մոտեցումները կոմեդիա դել արտեի հայեցակարգին:

Ատենախոսության *երկրորդ գլուխը* վերնագրված է «Կոմեդիա դել արտեն՝ Լուիջի Պիրանդելլոյի թատերական տեսության հիմք. ինքնություն-դիմակ գուգահեռը»: Այս գլխում քննվում են Պիրանդելլոյի՝ դել արտեի տեսլականը, իմպրովիզի մեթոդաբանությունը, դիմակի և ինքնության առնչությունը:

Երրորդ գլուխը՝ «Իտալական բեմի նորարարներն ու կոմեդիա դել արտեի ժամանակակից մեկնաբանությունները» բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Կյանքի և իմպրովիզի միջակայքում. դիմակ-պերսոնաժների ապամոնտաժումը Պետրոլինիի դրամատուրգիայում», վերլուծվում են Էտտորե Պետրոլինիի «դրամատուրգիայում ապամոնտաժման ենթարկված դիմակ-կերպարները և հեղինակի հումորի տեսլականը» /էջ 97/: Երևան է հանվում վերջինիս դրամատուրգիայի

և դեկ արտեի առնչությունը, վերլուծվում են դեկ արտեի և ավանգարդիստական թատրոնի հնարքների զուգակցումը այս դրամատուրգի գործերում: Երկրորդ ենթագլուխում՝ «Կոմեդիա դեկ արտեի ավանդույթի վերակենդանացումը (Էդուարդո դե Ֆիլիպոյի «Պուլչինելլայի որդին» կատակերգության օրինակով)», քննվում է Էդուարդո դե Ֆիլիպոյի թատերական տեսության մեջ կոմեդիա դեկ արտեի ավանդույթի արտացոլումը, նշված կատակերգության մեջ դիմակների, անցյալի և ներկայի անհամատեղելիության ներկայացումը: Աշխատանքի այս գլխի երրորդ ենթագլուխում՝ «Դարիո Ֆոն և կոմեդիա դեկ արտեի ավանդույթի նորարարացումը», դիտարկվում է կոմեդիա դեկ արտեի ավանդույթի՝ Դարիո Ֆոյի մեկնաբանությունը լեզվական ավանդույթի, գրոտեսկի և զաննիի կերպարի կիրառման տեսանկյունից:

Ատենախոսությունը վերջանում է ծավալուն Եզրակացություններով, որտեղ Անի Համբարձումյանը ներկայացնում է աշխատության գլխավոր եզրահանգումները:

Աշխատանքի շարադրանքը գրագետ է, այն գրված է գիտական հայերենով, առկա է մասնագիտական համապատասխան եզրույթային բառապաշար, գիտական ապարատը ճշգրիտ է: Ատենախոսությունը ունի մեթոդաբանական հստակ հիմք, կառուցվածքային առումով աշխատանքի ենթագլուխները գիտական հարցադրումների կուռ և տրամաբանական ընթացք են ապահովում: Սակայն, կարծում ենք, որ համամասնությունը պահպանելու համար ատենախոսության երկրորդ գլուխը նույնպես պետք է ենթագլուխների բաժանվեր /ատենախոսության էջ 64-82, 82-90, 90-96/՝ ըստ ներկայացված խնդիրների /ատենախոսության էջ 134-135/:

Նշենք, որ Ա. Համբարձումյանին հաջողվել է լուծել ատենախոսության առաջադրված խնդիրները և ցույց տալ կոմեդիա դեկ արտեի վերախմաստավորումը 20-րդ դարի իտալական դրամատուրգիայում:

Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին և ԲԿԳԿ-ի պահանջներին: Թեպետ սեղմագրի ռուսերեն և անգլերեն բաժիններում /տես էջ 17-20/ կան որոշ ոճական և իմաստային անհամապատասխանություններ, որոնք, կարծում ենք, թարգմանության խնդիր են:

Օրինակ, առաջին նախադասությունը թերի է /էջ 17/, պետք է նշված լինի «автореферат диссертации», մասնագիտական դասիչը համապատասխանեցվի ռուսերեն տառադարձությանը /նույնը անգլերեն մասում/: Էջ 17, 19-ում հանդիպում ենք «видеометодические принципы», “video methodological principles”, սակայն ատենախոսը նկատի ունի տեսամեթոդաբանական սկզբունքները /էջ 8/: Նաև 20-րդ էջում կարդում ենք «using the examples» /օգտագործելով Էդուարդո դե Ֆիլիպոյի «Պուլչինելլայի որդին» կատակերգության օրինակները/, այնինչ պետք է լինի Էդուարդո դե Ֆիլիպոյի «Պուլչինելլայի որդին» կատակերգության օրինակով /էջ 8/, էջ 20-ում «during the Second World War» /Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում/, բայց հասկանալի է, որ այդ ժամանակահատվածի հեղինակ է:

Ատենախոսությունն առավել կանոնակարգված և անթերի տեսնելու մտադրությամբ վերոհիշյալ դիտողություններին ուզում ենք ավելացնել հետևյալը.

1. Ատենախոսության երրորդ գլխի վերնագիրը ձևակերպման հստակության խնդիր ունի. վերնագրից պիտի պարզ լինի, որ «մեկնաբանությունները» ատենախոսինը չեն:
2. Աշխատանքի վերջին եզրակացությունը /ատենախոսության էջ 135/ շատ սեղմ է և չի արտահայտում երրորդ գլխի հազեցած բովանդակության մեջ ուսումնասիրված հարցերը (օրինակ դուրս է մնացել մնջախաղը Ֆոյի պիեսներում, բանաստեղծական բառախաղը):
3. Աշխատանքը հրատարակելու պարագայում ցանկալի է ընդարձակել խնդրի դիտարկման պատմական կոնտեքստը, ինչպես նաև Յունգ-Պիրանդելլո գուգահեռը:
4. Անդրադառնանք տեխնիկական խնդիրներին. ներածության մեջ Ա. Համբարձումյանը հետևողականորեն անդրադառնում է թեմայի ուսումնասիրվածության պատմությանը՝ նշելով խնդրով զբաղված և զբաղվող գիտնականների անունները: Այդ ուսումնասիրությունների մի մասին անդրադարձ է կատարվում նաև բուն շարադրանքում: Հարկ ենք համարում ընդգծել այն փաստը, որ որոշ գիտական աշխատանքների վերնագրեր ատենախոսության էջերում նշված չեն, տրված չեն համապատասխան հղումները կամ տրված են սխալ: Օրինակ, որոշ մեջբերումներ

ներկայացված են ոչ ճիշտ, ոչ լիարժեք (էջ 7 № 6 և էջ 137 № 35, էջ 68 № 85 և էջ 141 № 81, էջ 71 № 89 և էջ 139 № 61, էջ 74 № 95 և էջ 142 № 99, էջ 122 № 167 և էջ 142 № 91, էջ 123 № 170 և էջ 141 № 83, էջ 124 № 171, 172 և էջ 142 № 92, էջ 126 № 174 և էջ 142 № 90, էջ 129 № 182 կամ էջ 131 և էջ 136 № 7 և այլն): Կամ ընդհանրապես չկա հղում (օրինակ էջ 123), կամ աղբյուրները նշված չեն գրականության ցանկում (օրինակ էջ 131 № 185, էջ 71 № 88): Մ. Բախտինի մեծածավալ աշխատությունը («Творчество Франсуа Рабле и народная культура средневековья и Ренессанса. М. 1965. 541с.») ներկայացված է հողվածներ բաժնում /էջ 143/ և նշված 17 էջի մեջբերումը /ատենախոսության էջ 127/ չի համապատասխանում գրքին: Անհասկանալի է՝ ու՞մ նկատի ունի ատենախոսը 53-54 էջերում՝ Ժորժ Սանդի՞ն, թե՞ նրա որդուն՝ Մորիս Սանդին /տես նաև էջ 134/: Նշենք, որ Մորիս Սանդի երկհատորյակները (Sand Maurice. The history of the harlequinade. Publisher M. Secker. University of Michigan. 1915. Volume 1. 281 pages. Volume 2. 32 pages. և Maurice Sand. Masques et bouffons (Comedie Italienne). Paris, Michel Levy Freres, 1860. Volume 1. 450 pages. Volume 2. 345 pages.) գրականության ցանկում ներկայացված չեն, իսկ 53 էջում նշված № 63 հղումը թերի է: Ատենախոսությունը կշահեր, եթե որպես գիտական աղբյուր օգտագործվեր նաև Գ. Բոյաջիևի «Вечно прекрасный театр эпохи Возрождения. Л. Искусство. Ленинградское отделение. 1973. 471с.» գիրքը:

Նշված դիտողությունները, սակայն, չեն նվազեցնում ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները:


Այսպիսով, ամփոփելով տվյալ աշխատության՝ մեր գնահատականը, կարծում ենք, որ ծավալուն աշխատանք է կատարվել, որն ունի գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ:

Որոշեցին՝ Անի Արտակի Համբարձումյանի «Կոմեդիա դել արտեի վերախմաստավորումը 20-րդ դարի իտալական դրամատուրգիայում» թեկնածուական ատենախոսությունը բավարարում է Ժ.01.07. /Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի

հայցման համար ատենախոսությանը ներկայացվող ԲԿԳԿ-ի պահանջները և այն կարելի է երաշխավորել հրապարակային պաշտպանության:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի վարիչ՝ Բ.Գ.Թ., դոցենտ Բ. Բեջանյան



Հաստատում եմ Բ.Գ.Թ., դոցենտ Բ. Բեջանյանի ստորագրությունը

Գրականության ինստիտուտի գիտքարտուղար՝ Բ.Գ.Թ. Մ. Սարգսյան

12. 06. 2024